

վճարել, հետեւեալ օրն իսկ բարապան մը եկաւ գրաւել Տիկինին զգեստները եւ դռնաբանը Բայց Ամերիկոսին չի խաղա- ցաւ բնաւ Առանց կտրեարութիւն տա- լու ժողովուրդը եւ մեկնեցաւ։

Տիկին Ս. . Օսգանտէն անցաւ Բարիդ իջաւ դարձեալ Կոստն թաղի օթիւլը, ուր իր բուն անուան տակ ամսական 1200 ֆրանք վարձքով անաբաժին մը վարձեց։

Նորէն սկսաւ իր պայտանքը, միշտ ան- աննոց, միշտ զուարթ։

Եւ սակայն նշանաւոր դերձակուհին դեռ չէր ձգած օձիքը խեղճ Տիկինին որ որքան զարմացաւ երբ չարաքի առ- տու մը Կայսրին թաղին ոստիկանու- թեան քարայրանը եկաւ պաշտօնական գրաւում մը ընելու։

Գեղեցիկ Ամերիկոսին գիւրեհագու- տով ընդունեց իր հիւրերը, որոնք սկսան ամէն բան ժողովել լաթ, հագուստ, կո- չիկ եւն։ Բայց բարապանը գոհարները կը փնտէր որոնց գոյութիւնը մասնաւոր տեղեկագրով մը յայտարարուած էր ի- ռնէն Տիկին Ս. . հասկեցաւ, ցատկեց ան- միջապէս եւ այնքամի մորթով չիւտած պայտաւ մը բանալով մէջէն տրձակ մը դուրս բաշեց ու խոթեց կտրելու։

— Առէ՛ք եթէ կրնա՛ք, հոս են գոհար- ներն ու պանքատները գոր կը փնտէր։

Պաշտօնեան նկատելով որ արդէն գը- րաւումները բաւական էին պարտքը գո- ցելու, չուզեց վրայ տալ եւ քաշուեցաւ յարգելով երկասարկ կնիք ապ յանդուգն

Այսպէս Տիկին Ս. . տարօրինակ յա- մառութիւն մը ցոյց եւ տար հանդիպ այդ դերձակուհիին եւ դեռ անցեալ օր նորէն ժողովելով իր անտուկները, որոնց մէջ էին բոլոր գրաւումները, մեկնե- ցաւ գէպի Շէրպուտ, անկից ալ Ամերիկա անցնելով իր ամուսինը կերպանելու հա- մար Բայց խաբուած դերձակուհին դեղե- ցեակ Եւնիքին նոր խաչ մըն ալ պատ- րաստած էր։ Երկտարեց կնիք կտու- խուժելէն ինչպիսի ոստիկանութեան պաշ- տօնէից կողմէ՝ ձեռքակալուեցաւ անոր։

Զայտէ՛ք, եւ տարուեցաւ։ Սէն Լազարի կա- քարանիս ոստիկանագետն ներկայու- թեան Զոն՝ Տիկին Ս. . ցուցուց իր բա- լը անցագրերը, պաշտօնական հաստա- տագրերը եւ շնորհ կարգ որ բողոստ- լութիւններով ինքընքը արդարացնել, բայց զոր վատաւ, ոստիկանագետը յայտարարեց թէ ստիպուած էր վար դնել ինքը մինչեւ որ լուսարանուէր այս ան- լուր եւ հետաքրքրական խելիքը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արդէն գրած էինք թէ Լոնտոնի գեր- մանական դեսպանը իր ծերութեան պատ- ճառով հրաժարականը մատուցած ըլլալով կայսրի վերջին ալ ընտրեալ է զայն եւ անոր յաջորդ նշանակած է Վոլֆ Մէ- ղերինը։ Երբ նկատազուրկեան տունէնք թէ ինչ մեծ կարեւորութիւն ունին այսօր Անգլիոյ եւ Գերմանիոյ միջեւ մշակուած յարաբերութիւնները այն ատեն կը հա- մադուրեց թէ նոր դեսպանի մը ընտրու- թիւնն ալ իր որդի կարեւորութիւնը կըր- նայ ունենալ յարաբերութեանը մշակման մէջ, քանի որ շատ մը պարագաներու մէջ անոր անհատականութիւնը մեծ դեր մը կը խաղայ։ Դեպքայնի մը անհատակա- նութիւնն ալ իր կարեւորութիւնը ունի։ Նախկին ազգերու միջեւ յարաբերութեանց մշակման ատեն, թերեւս աւելորդ չլրլայ քանի մը տեղեկութիւններ տալ Վոլֆ Մէղերինի անձին վրայ։ Մէղերինը կը գտնուի իր 48րդ տարիքին մէջ։ 1882ին կը մտնէր զիւրանալիտական ասպարէզին մէջ, իր կյանքը Վիեննայի գեղարուեստի իր դիւանագիտական գործունէութեան մեծ մասը անցուցած է Լոնտոնի մէջ, ուր 1885ին դեսպանատան երկրորդ քա- տուղար կը նշանակուէր, Բարիդի դե- պանատան երրորդ քարտուղար ըլլալէ վերջ, Մինչեւ 1888 կը մնար Լոնտոն, եւսկից վերջ՝ Պրիւսէի դեսպանատանը կը փոխադրուէր։ 1890ին կը վերստու- նար Լոնտոն իր քարտուղար գեսպանա- տան, եւ այդ պաշտօնին մէջ կը մնար անընդհատ հինգ ու կէս տարի, անկից վերջ իւր Եգիպտոսի գերմանական ընդ- հանուր հիւպատոս Գանդեր երթալով։ Հոն 1896 մարտին նախարարութեան կողմէ արտաքին կարգի գեսպանի եւ վաղորդ պատուիրակի տիպոսը կը ստանար։ 1897 յունուարին Բուստի կողմէ իւր գեսպան կը զրկուէր Մէղերինի արժեքները։ 1898ին եւ 1899ին զանազան ճամբոր- դութեանց միջոցին կայսրի կնիքներու, իւր արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչ։

✱

Անգլիոյ նախարարութիւնը վերջին չարթուն այնքան խոսեցաւ Հարաւային Աֆրիկէի պատերազմին վրայ, որքան ցարդ չէր խօսած։ Նախարարի տունէն քանութիւն մը յաջորդեց ուրիշ նախա- րարի մը ատենարանութեան Լորտ Սո- լըզլըյի երրորդ տարին թեւակոխող պա- տերազմի մը համար։ Եւստ յայտարարեց թէ շատ նպատաւոր ընթացքի մէջ է եւ թէ ոչ մէկ պատճառ չկայ այդ մասին յո- ռետեսական մասնաճիւղին ունենալու։ Պրտորիք ալ, հակառակ ամենուն կողմէ եղած յայտարարութիւններուն թէ պա- տերազմը պէտք եղած մարդասիրական սկզբունքներով չէ որ տեղի կ'ունենայ Անգլիացիներուն կողմէ, ինչքան թէ պա- տերազմը կատարելով մարդասիրական սկզբունքներով է որ Անգլիացիները կա- տարած են սկիզբի օրէն մինչեւ այսօր։ Հարաւային Աֆրիկէի պատերազմին մէջ։ Նմանապէս կը յայտարարէ Պրտորիք թէ անգլիական զինուորները ամէն օր քայլ մը աւելի առաջ երթալու վրայ են, եւ սա ալ նորէն հակառակ թերթերու գրածին։ Դիտուած է որ երբ գործերը շատ գոհա- ցուցիչ վիճակ մը չունենան, այն ատեն Անգլիոյ նախարարները կը սկսին խօսիլ ժողովուրդին, գործերու արդիւնքին անբաւականութեան ժողովուրդին վրայ ըրած աննպաստ սպաւորութիւնը մեղ- մացնելու կամ բողոքովին փոխելու համար։ Այն պարագան որ նախարարները Անգ- լիոյ մէջ սկսած են շատ խօսիլ, պատճառ մըն է մեղի ենթադրել տալու համար թէ Հարաւային Աֆրիկէի պատերազմը տա- կաւին բաւական հեռու է Անգլիացիին րուն համար նպատաւոր ընթացք մը ա- ռած ըլլալէ, հետեւաբար կրնայ հակա- ոսակ հաշուութեան մը մասին չըրձարու- թեան մէջ եղած զրոյցներուն, տակաւին բաւական ատեն տեւել, թէեւ արդի նա- խարարութիւնը կարենայ իր գոյութիւնը պահպանել։

ԼՈՒՐԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՔԻԻ- ԿԻՒ ՄԷՋ.— Պրիւսէի մէջ սա զրոյցը չոր- քաբերութեան մէջ է թէ Տօքթ. Լէյտի Պերլին երթալը, նպատակ ունի վերին փորձ մը ընել գիւրեհու համար Գերմանիոյ կայսրի, որպէս զի ի նպատակ Հարաւային Աֆրիկէի մէջ խաղաղութեան վերահաս- տատութեան միջամտել Այս մասին Մա- ղիկի յարաքի օրուան թուով դրած էինք Տօքթ. Լէյտի սա յայտարարութիւնը թէ Պերլին երթալով ինքը զիւրանալիտական ոչ մէկ նպատակ ունի։ Դիտուած է սակայն ձեւերը թէ այս երկու լուրերն օրն է անոց։ Միւս կողմէ Տօքթ. Լէյտի, նոյն իսկ եթէ կայսրի դիմում ընելու նպատա- կով Պերլին կ'երթայ, չի կարծուի որ ար- քիւնտ որ ըլլայ անկախ քանի որ ար անկից առաջ պօքը պատուիրակներու նոյն ուղ- դութեան ատած քայլերը սպարդիւն անցան։ Դերմանիոյ կայսրի եւ Ռուսիոյ Զարին միջեւ պաշտօնական համաձայ- նութիւն մը գոյացած ըլլալը, որուն ծրարատ եւ երեւակ ներդաշնակութեան միւս անդամներն ալ համաձայն գտնուած են, երբեք բաւական չեն նկատուի որ այսօր Հարաւային Աֆրիկէի պատերազ- մին աղբու միջամտութիւն մը ըլլայ օտար պետութեան մը կողմէ, ի նպատակ Պեռ- ներուն։

Անգլիական կորուստները ցոյց տուող ցուցակէն կարելի է տեսնել թէ լայն ի զխաւոր կորուստներն տեղի ունեցած են նաեւ կարգ մը մանր կորուստներ Անգլիաց- ւոց եւ Պեռներուն միջեւ։ Այսպէս Թի- կերքալաֆի մօտ Անգլիացիները պարտու- թիւն կրած են նոյեմբեր 6ին, սպիտ մը եւ երկու զինուոր Վիրալուրուած են 11 հոգի ալ աներեւութացած, որոնք կը նկատուին թէ Պեռներուն ձեռքը գեղի ինկած ըլլան։ Միեւնոյն օրը Վիրալուրէի մօտ տեղի ունեցած կռուի մը պահան, Անգլիացիներուն կողմէ գնդապետ մը եւ երկու զինուորներ ծանրապէս վիրաւոր- ուած են։ Յետոյ հոկտեմբեր 31ին Պեռնէն տամի մօտերը կռուի մը միջոցին 9 անգ- լիացի զինուորներ վիրաւորուած են։

Գլուխըներին 3 նոյեմբեր թուական- նով հասած հեռագրերն կը հաղորդեն թէ Պեռներուն մեծկակ ջոկատ մը հոկտեմբեր 29ին Պեռնիտամի մօտերը յարձակեցաւ։ 85 Անգլիացիներէ պաշտպանուած առաջ- ման մը վրայ եւ բուն մարտում մը մը վերջ աւարի տուաւ։ Անգլիական կո- րուստներն են երկու սպայ եւ 12 մար- դիկ։ Կրտուի թէ Պեռներն ալ մարդու հաւասար կորուստ ունեցած են։

Վերը, Տեսութեան բաժնին մէջ, արդէն խօսած ենք Պրտորիքի խօսած ճառի մա- սին։ Հոս կը փութանք անոր աստիճա- կան մասերը ներկայացնել։ Պրտորիք կը յայտարարէ թէ ոչ մէկ պատերազմ այն- քան մարդապիտաւոր տեղի ունեցած է,

որքան Հարաւային Աֆրիկէի պատերազ- մը, թէեւ կեղծասական բանականութեա- մէջ պատահած մահերու թիւը մտաւան- ջութիւն կը պատճառէ կատաղիւրութեան։ Անկարելի է որ քաղաքի մը մէջ պատա- հած մահերու թիւին չափ միայն ըլլայ բանականութիւն մը մէջ պատահած մահերու թիւը։ Այս առթիւ Պրտորիք կ'որոգարա- ցրի թէ ինչո՞ւ բանականութիւն մը մէջ մա- հերու թիւը պէտք է աւելի ըլլայ։

Պրտորիք պատերազմին երկարիւր կը վերադրէ Պեռներուն հանդէպ անգլիական կատաղութեան ցոյց տուած թող ըն- թացքն եւ կը յարէ թէ Պեռները մինչեւ այսօր եթէ կրցած են իրենց հեռքեր վրայ գտնուող ընկնելը սպաննած են։ Իր յայտնի Պրտորիք թէ տակաւին նոյն օրը հեռագիր մը ստացած է Վիեննէն որ կը հաղորդէ թէ Պեռները յաճախ կը սպաննեն ընկնելու կեղծական բանա- կետերու եւ զանազան կողմներու մէջ։ Կը գտնուէին 42000 Պեռներն։ Երբ նաեւ հաշուուի սպաննուած, վիրաւորուած եւ երկրէն հեռացած Պեռներու թիւը 11,000ի կը հասնի։ Զէնքի օրակ գտնուող Պեռնե- րու թիւը այսօր կը հասնի 10,000ին։ Պա- շարման նոր գրութեան մը շնորհիւ, ըսաւ Պրտորիք, Անգլիացիները կարելի պիտի ընեն որպէս զի Պեռները Ռումանիա մէջ 14,700 քառակուսի միւնի վրայ, ինչպէս նաեւ Օրանի մէջ 17,000 քառակուսի միւնի վրայ չ'ըլլաւ շատա- ինչ։ Իսկ մնացեալ մասերն ալ կարելի պիտի ըլլայ անգլիական պղտի գորազուցելու միջոցաւ մաքրել Պեռներէն։ Պաշարման այս նոր գրութեան առաւելութիւնները կրնան հաստատուիլ իրողութեանը։ Անգ- լիայ ամուսան մէջ, երկաթուղիի գիծերուն վրայ ոչ մէկ ընդհատում տեղի չ'ունենալը աղայցոյց մըն է այդ գրութեան առաւե- լութեան, մինչդեռ 1900ի հոկտեմբերին այդ գիծերուն վրայ 32 անգամ ընդհա- րում տեղի ունեցած է։

Պրտորիք կը վերջացնէ իր ատենա- բանութիւնը զիտու տալով թէ կատաղա- րութիւնը համազուած ըլլալով Պեռներու ընդդիմութիւնը ընկճելու անհրաժեշտու- թեան, նպատակ ունի նոր գորազուցելու տեղի Այս առթիւ կատաղութիւնը դի- մում ըրած է արդէն բրիտանական պաշ- արկանութեանը 2000 հեծելազորներէ բաղկացած երկու զորազուցներ, ձիաւոր հետեւակազորներ, եւ հետեւակազորե- րու երկու կանոնաւոր վաշտեր հրամա- տացած են ճամբայ կէլելու համար պատ- րաստ գտնուիլ։ Հնդկաստան նմանապէս չորս վաշտ հետեւակազորք եւ երկու վաշտ հեծելազորք կը զրկէ, եւ ատենց փոխարէն ուրիշ զորազուցներ կը տա- նան, որոնց համար այնքան պէտք մը չ'կայ Հարաւային Աֆրիկէի մէջ, Բաց աստի ոստիկան զինուորներու կամարու վաշտեր պիտի զրկուին Հարաւային Աֆ- րիկէ Եմփէրներու զորազուցներուն 17 հազար հոգիէն, որոնք Քիչնէրի զրկուած էին, միայն 350 հոգի ետ զրկուած են։

ՍՊԱՆԻԱ.— Կատաղութեան մօտ եւ զոյ իրադէի չըրձանակներու մէջ կը հեր- քուի այս լուրը թէ, նախարարապետ Սա- կաթիւ անձնական տկարութեան պատ- ճառաւ մտադիր է իր պաշտօնէն հրա- ժարելու։

Մարտի 11-ի պիտի թերթին գրա- ծին նաշուի։ Սակաթիւնի առողջապա- հական վիճակը թէեւ հեռու որ եւ լուրջ մտահոգութիւն պատճառել, սա- կաթի նկատողութեան անկում իր ընդհա- նուր տկար վիճակը կրնայ նորանոր վատ- թարկացումներէ վախճուիլ։

Պարսկումայ կը հեռագրեն թէ անց- եալ չորեքշաբթի զիւրե ամէն բան հան- զարու անցած է եւ զինուորներն ալ ի- րենց զորանոցները քաշուած են։

Գերմանիոյ մաքսային նոր սակա- ցոյցը Դաշնակցային բոլոր անդամներու ներկայութեան վիճաբանութեան են։ Թարկուած ըլլալով, կը հեռագրուի այս մասին։ «Հետեւեալ սպասուածին, նա- խագահութիւնը ոչ նախարարապետը եւ ոչ ալ քանձային նախարարը կը կատարէր, ալ ներքին գործոց նախարարութեան քարտուղար Բողաւալուքի Նիսար, որուն ներկայ էին բոլոր գերմանական պետու- թիւներու ներկայացուցիչները, տե- լեց երեք ժամ։

Վիճաբանութիւններ տեղի ունեցան վիրաւորաբար արմառեց նուազագոյն մարդատուրքի եւ սակցոյցի 10րդ յօդ- ուածի մասին, որ կ'որոշէ սակցոյցի գոր- ծադրութեան գնելու օրը եւ զաշնակցային խորհուրդին հաւանութիւնը այս առթիւ կայսրի կարգադրութեանը Այս երկու կէ- տերն ալ յանձնաժողովին որոշածին պէս մնացին, առանց փոփոխութեանց են։

Թարկուելու Բողաւալուքի պետութեան ներկայացուցիչներ հակառակ քուէ տուին արմառքի կարեւոր տեսակներու համար եղած նուազագոյն մաքսատուրքին։ Սոյն հակառակ քուէ տուողներուն ինչպէս նաեւ ուրիշ պետութեանց ներկայացու- ցիչներու կողմէ յայտարարութիւններ եւ զան թէ իրենց կողմէ եղած առաջարկները զաշնակցային խորհուրդի յանձնաժողով- լին կողմէ մերժուած էին։ Երազիրը իր ամբողջութեան մէջ միաձայն հաւանու- թեան մօտեցող մեծամասնութեամբ մը ընդունուեցաւ։

Կը հաղորդուի թէ, նախարարապե- տին ինկադրութեանը վրայ, մաքսային նոր սակցոյցը յարակից պատճառաբա- նութիւններով կ'աշխատուի կարելի ե- ղածին չափ չուտ հրատարակելու, որպէս մինչեւ անոր Ռայսսիական ներկայանա- լը, երեսփոխանները արդէն ի վիճակի ըլլան գիտնալու զիրենց զբաղեցնող խնդիրները։

Այն փոփոխութիւնները զորս Դաշ- նակցային խորհուրդը կամ Դաշնակցային խորհուրդի յանձնաժողովը մաքսային սակցոյցի ծրագրին կամ ուղղակի սա- կացոյցին մէջ առնուց, կը հաղորդուի թէ զուրկ են հիմնական կարեւորութիւնէ։

Ռուսիոյ մէջ, մաքսային նոր սակա- ցոյցին վրայ սա կարծիքը կը յայտնուի թէ Գերմանիա անով իր ճակատագիրը խաղի ենթարկած չ'ըլլայ։ Ամէնէն արեւ- նահնդ պատերազմն ալ, Ռուսերու կար- օքբեւ եւսկից չէր գրաւար այնքան ծանր հետեւեալներ ունենալ, որքան մաքսա- յին այս պատերազմը, զոր բոլոր երկր- ները պիտի ունենան Գերմանիոյ հետ, եթէ այս վերջինը օրէնքի կարգ անցնէ իր ծրագրուած մաքսային գրութիւնը։ Գերմանիա պէտք է նկատողութեան տու- նէ որ ֆրանսեզերմանական պատե- լազմէն վերջը իր ոյժը ոչ թէ բանակին, այլ իր առեւտրերն եւ ճարտարարուես- տին մէջ կը կայանայ։ Ինչ պիտի պա- տահի ուրիշ, եթէ Գերմանիոյ բոլոր զորացի երկրները նմանօրինակ մաքսա- յին գրութեամբ մը պոքթի մը սկսին Գերմանիոյ դէմ։ Բնաւ զարմանալու բան մը չ'իկայ եթէ Գերմանիոյ զորացի երկրները իրենց առեւտրական յարաբե- րութեանց ապագան Գերմանիոյ հետ վե- րին աստիճանի խախտած գտնին այդ- առթիւ։ Այս կէտը ամէնէն առաջ պէտք է շահագործէ Գերմանացիները։ Գերմա- նիոյ զրացի երկրները, առանց Գերմա- նիոյ հետ առեւտրական յարաբերութեան մըն ալ կարող են գործին տակէն ելլել։ Բայց Գերմանիոյ ատենց այդ զրացի եր- կրներուն չի կրնար գործին տակէն ելլել։

ՆԵՐՔԻՆ

ՊԱՇՏՈՒԱՆՈՒՆ


ԱՍՏԻՃԱՆ.— Պաշայի աստիճան արուե- ցաւ երկրագործական նախարարութեան մասնաշաղկ խորհրդական Էրսա՛ Էֆի։ Ու- լայի Ա. աստիճան՝ Կրպտատական գոր- ծոց փոխ-տնօրէն Հաճի Սպտուլա՛ պէլի։ Միւրթէմայիլի աստիճան՝ Թիւրանի Օսմ. դեսպանատան Ա. քարտուղար Էնվէր պէլի։

ՊԱՏՈՒԱՆԵՆ.— Ա. կարգի Օսմանիլէ Հէրէքէի Կայս. գործարանին տնօրէն Հա- ճի Աքթի Էֆի։ Ա. կարգի Մէճիտիլէ՛ Պետ. խորհրդի օրէնսդիր ճիւղին անդամ Հաֆիզ Ֆէյիլի պէլի։ Բ. կարգի Օսմանիլէ՛ Գ. զորաբանակի սպաներէն միրիլիւս Մէհմէտ Սալիկ փաշայի։ Բ. կարգի Մէ- ճիտիլէ՛ Կայս. անձնական Գանձուէն նա- խարարութեան հաշուապետական զիւ- ւանի տնօրէն Մուհիթտին Էֆի։ Բ. կար- գի Օսմանիլէ՛ Պարսիկի կուսակալի փո- խնորդ Ակալիւ Լաթիֆ փաշայի եւ Գալ. ժողովուրդ անդամ Մէհմէտիլ փա- շայի։

ՆՈՐԱՆՏԻՐ ՄԵԾ-ԵՊԱՐՔՈՍ ՍԱՅԻՏ ՓԱՅՍ

Երէկ կէս օրէն հրատարակուած թուրք թերթերու յաւելուածները կը ծա- նուցանեն թէ նախկին Մեծ-Եպարքոս Բարձր. Սալիկ փաշա Կայս. Իրատէի մը համաձայն՝ վերաբանձնած է Մեծ-Եպար- քոսութեան պաշտօնը։ Այս առթիւ Բարձր. Սալիկ փաշա իր երախտագիտութիւնը եւ չնորհակալութիւնը յայտնելու համար Կայս. Պաշայն երթալով պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու եւ ար- ժանապա Կայս. մեծարանաց։ Յետոյ Սալիկ փաշա՝ Կայս. ախոռին յատուկ կաթերով եկաւ Պէշիքթաշի նաւամա-

տոյցը, ուսկից հինգ զուգարթի նաւակով Ժամբ ինր տասը անցած Սիրքէճի հասաւ։ Սալիկ փաշա Սիրքէճի նաւամատոյցը հասնելուն՝ ընդունուեցաւ։ Կայս. գիւտնի Պէշիքթի նաւոր եւ Մեծ-Եպարքոսութեան քարտուղար Զիւսա պէլի, Բ. Դրան Դիւանատան տնօրէն Պաքը Էֆի. եւ արարողական պաշտօնէից կողմէ։ Հոն բոլոր բարձրաստիճան պաշտօնատարները ձիւրու վրայ նստած թափօր մը կազմե- ցին որ սկսաւ յառաջանալ դէպ ի Բ. Դուռը։ Թափօրին առիւեւէն կ'երթար Կայս. Պա- լատան Ա. քարտուղար Թահսին պէլ՝ որ կարտիր սնդուի վրայ բռնած էր Կայս. իսթիլէ՛ Հիւի՛ՄԱՅՈՒՆԸ։ Թահսին պէլի ալ կողմէն կը յառաջանար նորրորդ Մեծ Ե- պարքոսը, իսկ ձախէն՝ Բարձր. Շէյխ իւլ Ռայալէֆն։ Կայս. նուազածութեան գուն- դէն խումբ մը դեղեցիկ կտորներ կը նը- ւազէր։ Բ. Դուռը հասնելուն՝ պաշտօ- նական ընդունելութեան աւարտումէն վերջ Մեծ Եպարքոսը եւ հետեւորդները զիւրեւ յալլ օտարն, ուր արդէն ներկայ էին նախարարները եւ Պետ. բարձրաստի- ճան պաշտօնատարները։ Կայս. Պալատան քարտուղար Թահսին պէլ՝ իսթիլէ՛ Հիւի՛ ՄԱՅՈՒՆԸ՝ ամենամեծ յարգանքօք հա՛մ բուրելէն վերջ՝ յանձնեց Սալիկ փաշայի որ ինքն ալ յարգանքօք համարուց։ Յեւ օրը Մեծ-Եպարքոսութեան խորհրդական թէլիֆիք փաշա՝ կարգաւ Կայս. իսթիլէ՛ Հիւի՛ՄԱՅՈՒՆԸ՝ որ հետեւեալն է։



«Իմ Մեծաշուք Վեգիրա Սալիկ փաշա, «Քիժար փաշայի մասնամար» ինձ վա- ղածամօք եղած Ձեր հաւատարմութեան եւ կարողութեան համար Մեծ-Եպարքո- սութիւ

